Ք.Երևան 05.10.2025թ.

«ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողով

Մայիս Հայրապետյանի կողմից, հնարավոր վարքագծի վերաբերյալ կանոնների խախտման դեպքում, կարգապահական վարույթ հարուցելու համար լսումներ հրավիրելու մասին

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հանձնաժողովը, մասնակցությամբ՝ հանձնաժողովի նախագահ՝ Արման Սարգսյանի, հանձնաժողովի անդամներ՝ Լուսինե Սարգսյանի, Հարություն Գևորգյանի և Արմենակ Ադամյանի, քննարկելով ըստ ,,Եռանավ,, ՍՊԸ-ի /այսուհետ՝ դիմումատու/ Մայիս Հայրապետյանի նկատմամբ ներկայացված , կարգապահական վարույթ հարուցելու մասին դիմումը պարզեց, որ ներկայացված դիմումի առնչությամբ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 27.3 հոդվածի 1-ին մասի «3»-րդ ենթակետի և նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ մասերով սահմանված նորմերով, կառավարիչ՝ Մայիս Հայրապետյանի /այսուհետ կառավարիչ/ նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ: Կառավարիչի կողմից, վարքագծի վերաբերյալ կանոնների հնարավոր խախտումը պարզելու նպատակով, ս.թ. օգոստոսի 5-ին և սեպտեմբերի 5-ին նշանակվել է կարգապահական հանձնաժողովի նիստ, որին ներկայացել էին հանձնաժողովի անդամներ՝ Լուսինե Սարգսյանը, Հարություն Գևորգյանը և Արմենակ Ադամյանը:Չնայած այն հանգամանքին, որ ինչպես կառավարիչը այնպես էլ դիմումատուն պատշաճ ծանուցված էին, սակայն վերջիններս նշանակված նիստին չէին ներկայացել:

Իսկ ս.թ. սեպտեմբերի 5-ին նշանակված նիստին հանձնաժողովի նիստը բացեց հանձնաժողովի նախագահ՝ Ա.Սարգսյանը և հիմք ընդունելով այն հանգամանը, որ նիստին ներկա է գտնվել թվով երեք անդամներ, ուստի կարգապահական հանձնաժողովի գործունեության և սնանկության գործով կառավարչի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի 4.2 կետի հիմքով, Ա.Սարգսյանը հայտնեց, որ նիստի անցկացման քվորումը ապահովված է և կարող են սկսել նշանակված նիստը:

Նիստի սկզբում, հայտարարությամբ հանդես եկավ հանձնաժողովի նախագահ՝ Ա.Սարգսյանը, որը նիստի մասնակիցներին հայտնեց, որ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ ինչպես դիմումատուի դիմումի սկանավորված տարբերակը, այնպես էլ կառավարիչի կողմից ներկայացված պատասխանը, պատշաճ կարգով ուղարկվել է կարգապահական հանձնաժողովի անդամներին և նրանք ծանոթ են այդ փաստաթղթերին, ուստի Ա.Սարգսյանը հանձնաժողովի անդամներին հայտնեց, որ ս.թ.հուլիսի 25-ին ,,Եռանավ,, ՍՊԸ-ի կողմից, «ՍԳԿԿ» ԻԿԿ դիտորդ խորհրդի նախագահ Տիգրան Սահակյանի անվամբ ներկայացվել է դիմում Մայիս Հայրապետյանի նկատմամբ, կարգապահական վարույթ հարուցելու և նրան կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին:Ա.Սարգսյանը հայտնեց նաև, որայնուհետև ,,Եռանավ,, ՍՊԸ-ի կողմից, Տիգրան Սահակյանի անվամբ ներկայացվել է դիմում,, որով վերջինս հայտնել է, որ «Եռանավ» ՍՊԸ-ի ներկայացուցիչները կարգապահական վարույթի ընթացքում, հանդիպում են ունեցել Մայիս Հայրապետյանի հետ, քննարկել են տարբեր հարցեր այդ թվում առկա բազմաթիվ տարաձայնությունների հետ կապված և եկել են ընդհանուր հայտարարի շարունակել կառուցողական աշխատանքը ի նպաստ պարտապանի առողջացման ծրագրի իրագործման:«Եռանավ» ՍՊԸ-ն հայտնել է նաև, որ վերջիններս բարձր են գնահատում կարգապահական հանձնաժողովի արագ արձագանքը նշված խնդրին, շնորհակալություն են հայտնել հետևողական լինելու համար և միաժամանակ խնդրել են Մայիս Հայրապետյանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու և վերջինիս կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին դիմում-միջնորդությունը թողնել առանց քննարկման:

Ելնելով իր կողմից նշվածից էլ, Ա.Սարգսյանը առաջարկեց հայտնել իրենց կարծիքները, հարուցված կարգապահական վարույթի վերաբերյալ:

Հանձնաժողովի անդամ՝ Հարություն Գևորգյանը հայտնեց, որ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ ինչպես դիմումատուն, այնպես էլ՝ սնանկության գործով կառավարիչը հաշտվել են, ուստի վերջինս կարծիք հայտնեց վարույթը կարճել:

Հանձնաժողովի անդամ՝ Լուսինե Սարգսյանը հայտնեց, որ եթե բողոք բարձրացնող անձը այս պահի դրությամբ գտնում է, որ չկա վեճ և վարքագծի կանոնի խախտում, ուստի վերջինս կարծիք հայտնեց վարույթը կարճելու վերաբերյալ:

Հանձնաժողովի անդամ՝ Արմենակ Ադամյանը հայտնեց, որ համակարծիքի է իր կոլեգաների կողմից հայտնած կարծիքների և նույնպես գտնում է, որ հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման:

Հանձնաժողովի անդամ, նախագահ Արման Սարգսյանը հայտնեց, որ չնայած նրան, որ իրականում կարող էին դիմումատուի կողմից դիմումում ներկայացրած հանգամանքները իրոք հանդիսանալ կառավարչի կողմից վարքագծի կանոնի խախտում, սակայն հիմք ընդունելով այն հանգամանքը, որ դիմումից ըստ էության դիմումատուն հրաժարվել է՝ հայտնել է, որ վեճը սպառվել է և խնդրել է վարույթը կարճել, իսկ նման պայմաններում կարգապահական հանձնաժողովը չունի ըստ էության դիմում, ուստի նույնպես հայտնեց կարծիք, որ կարգապահական վարույթը ենթակա է կարճման:

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի 27.4 հոդվածի 1-ին մասի 7-րդ ենթակետը նախատեսում է, որ Կարգապահական վարույթ հարուցող մարմինը չի հարուցում կառավարչին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարույթ, իսկ հարուցված վարույթը կարճում է, եթե մինչև կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին որոշում կայացնելը, կառավարիչը վերացրել է կարգապահական վարույթ հարուցելու հիմք հանդիսացած հանգամանքները:

Եթե դիտարկենք վերը նշված նորմի փաստական հանգամանքները, ապա ակնհայտ է դառնում այն հանգամանքը, որ սույն հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման, քանի որ ըստ էության, կառավարչի կողմից լուծվել է դիմումում նշված վեճը և դիմումատուի կողմից այլևս որևիցե մի պահանջ առկա չէ:

Կից ներկայացվում է կարգապահական վարույթին առընչվող փաստաթղթերը 44 թերթից:

Ա.Սարգսյան

Լ.Սարգսյան

Հ.Գևորգյան

Ա.Ադամյան